

3. Бакалян П. А., Антонян О. А., Матевосян Р. А., Оганесян Л. Г. Сб. научн. тр. Ереванск. мединститута, 40—43, Ереван, 1988.
4. Боговский П. А., Роома М. Я. *Вопр. онкологии*, 33, 5, 3—11, 1987.
5. Джиоев Ф. К. *Вопр. онкологии*, 34, 11, 1369—1374, 1988.
6. Егиазарян С. В., Арутюнян Р. М., Оганесян Г. Г., Сибатян К. А. *Биолог. ж. Армении*, 40, 11, 953—955, 1987.
7. Зурабян Н. П., Еолян Э. С., Мидян С. А., Симонян И. В. Тез. докл. 5-го съезда Армянского ОГиС им. Н. И. Вавилова, 108—120, 1976.
8. Коэн Л. А. *В мире науки*, 1, 6—13, 1988.
9. Миллер А. Б. *Вопр. онкологии*, 34, 2, 131—137, 1988.
10. Мкртчян Л. Н., Зильфян В. Н., Атанесян С. Г., Аюкян Ф. К. Мат-лы научн. конф. ОНЦ им. В. А. Фанарджяна, 93—96, 1989.
11. Рубеник Б. Л., Костюковский Я. Л., Меламед Д. Б. Профилактика загрязнений пищевых продуктов канцерогенными веществами. Киев, 1983.
12. Томаши Л. *Вопр. онкологии*, 33, 12, 3—12, 1987.
13. Фичиджян Б. С., Зильфян В. П., Кумкумаджян В. А. *Вопр. рентгенологии и онкологии*, 11, 139—141, Ереван, 1981.
14. Ames B. N., Magaw R., Gold L. S. *Science*, 235, 4799, 271—279, 1987.
15. IARC Sci. Publ. 84, Lyon, 655, 1987.
16. Lu S., Oshima H., Fu H. *Cancer Res.*, 46, 3, 1485—1491, 1985.
17. Perera F., Boffetta P. *J. N. C. I.*, 80, 6, 1282—1291, 1988.
18. Wagner D., Suker D. E., Bilmazer C. et al. *Cancer Res.*, 45, 12, 6519—6522, 1985.
19. Welsburger J. H., Windler E. L., Hoch C. H. *Cancer Res.*, 50, 11, 2541—2549, 1982.

Поступило 20.III 1989 г.

Հայաստանի կենսաբանական հանդես, № 5, (42), 1989.

УДК 638.1+638.178.8

## Մեղրի եւ մեղրամսի օգտագործումը միջնադարեան բժիշկ- Գեղագործ-մեղվաբուծիչ շահագործի Ալեքսանոսի Գեղասոսերոսի

Ա. Օ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

*Մ. Մաշտոցի անվան մասնագիտական երեսն*

*Հոգիմտով մեղազրիթի հիման վրա ներկայացված է մեղրի և մեղրամսի բուժական կիրառությունը միջնադարյան Հայ բժիշկ Ալեքսանոսի ղեղասոսերոսի: Տարիների մեր արդյունավետի շնորհիվ զանվել ու սղտագործվել են այդ ղեղասոսերոսով առաջարկված բույսերը, ծաղիկները, արմատներն ու այլ նյութեր, որոնք մեղրի ու մեղրամսի հետ կիրառելով կլանրում՝ ժողովրդական բժշկության մեջ, ավել են լավ արդյունք:*

Приводятся сведения о применении меда и воска в рецептах средневекового врача Алексаноса. Нами найдены рекомендуемые в этих рецептах растения и компоненты, которые в сочетании с медом и воском использовались в народе и давали хорошие результаты.

The medicinal use of honey and wax in prescriptions of the medieval Armenian physician Aleksianos has been stated on the basis of manuscripts. By means of long investigations the plants, flowers, roots and other substances, suggested in these prescriptions have been found, which are used with honey and wax in life, giving a good result in folk medicine.

## Միջնադարյան ղեկաւորներ-մեղր-մամ:

Հին և միջնադարյան հայ ժողովրդական բժշկութեան մեջ որպէս ղեկամիջոց երբեմն առանձին, երբեմն էլ այլ նյութերի հետ իրեն ղեկատուները բազադրութեան օգտագործվել է նաև մարդու փոքրիկ բարեկամի՝ մեղվի արտադրանքը՝ մեղրն ու մեղրածոժը, հաճախ էլ՝ մեղվաթուշնը: Ինչպես վկայում են գրիչներն ու ժողովրդական բժիշկները, այն միշտ էլ բարելավել է հիվանդի վիճակը:

Այս տեսակեաից առանձնակի արժեք է ներկայացնում Մաշտոցի անվան մատենադարանում պահպանված № 8185 ձեռագիրը, որը XVI դարով թվագրվող ժողովածու է: Վերջինիս մի բաժինը բժշկարան է՝ գրված միջնադարի նշանավոր բժիշկ Ալեքսիանոսի ձեռքով: Բժշկարանը բաղկացած է եղել 80 գլխից, որոնք սնեն ենթարածիններ, վերջին երեք զուգաները մեղ շեն հասել:

Ձեռագիրը տեղեկացնում է, որ Ալեքսիանոսը ապրել և դործել է Շամբորաձորի շրջանում, նա քաջ ծանոթ է եղել այդ վայրերին՝ Շամբորաձորով հոսող Չարեք գետին ու գետափին փռված Գառնակեր գյուղին, շրջանի տեղանքին, բուսական ու կենդանական աշխարհին, երկար տարիներ զբաղվել է մեղվապահութեամբ, որը երևում է մեղվի խնամքի գործում նրա ունեցած հմտութունից: Լավատեղյակ է եղել ժողովրդական բժշկութեանն ու անասնաբուժութեանը, պարտաւել է նաև կաշեգործութեամբ և այդ բոլոր բնագավաններում իր կուտակած փորձն ու գիտելիքները խնամքով շարադրել է: Որպէս հավաստումն այն ամենի իսկութեան ինչ գրում է ինքը, շեշտում է թե՛ «ես մեղաւոր Ալեքսիանոսս աշօք տեսեալ եմ և արարեալ, տէրն գիտակ է, որ սուա չէ» (էջ 85 ա):

Բժշկարանը ղեկարանական մի անտիպ երկ է, որտեղ ղեկատուներ են առաջարկվում ներքին, նյարդային, վիրաբուժական, մաշկային, կանաչի և այլ հիվանդութեանների բուժման համար, որոնց մեծ մասի բազադրութեան մեջ ժամն ու մեղրը դրավում են կարևոր տեղ: Ինչպէս երևում է Ալեքսիանոսի բժշկարանի բովանդակութեանից և տարբեր աղբիւրներով արած ուղղակի ու անուղղակի ակնարկներից, նա իր բժշկական գործունեութեան բնթացքում ոչ միայն քաջ ծանոթ է եղել միջնադարյան հայանի բժշկապետների աշխատութեաններին, ոչ միայն վարպետներն օգտվել է ժողովրդական բժշկութեան հմտութեաններից, այլև որոշ բաներ ավելացրել է սեփական փորձից: Ուստի, սույն բժշկարանի ոչ միայն գրիչը, այլ նաև հեղինակն է Ալեքսիանոս բժիշկը: Այդ ամենի հիման վրա էլ նա ներկայացնում է իր ղեկատուները և դրանով բուժելու եղանակները, որոնցից կանդրազառնանք միայն նրանց, որոնք կապվում են մեղվի արտադրանքի հետ:

Այսպէս, աչքացաւի և աչքի լույսը նվազելու դեպքում «վասն աչաց ցաւի» գլխում առում է՝ «զկաքաւի լեղին հում մեղրով աչքն դիր», որ է՝ կաքվի լեղին և հում մեղրը խառնի իրար, շաղախի և օրը մի քանի անգամ կաթեցրու աչքի մեջ: Իսկ երբ աչքի վրա սպիտակ հատիկ է առաջանում, այն մաքրելու համար առաջարկում է. «առ մեռելի ոսկը, մեղու չորացուցած, և պիծկի հունդ, զամենն հավասար ձէժէ և մաղն և քիչ մի պաղ շաքար ալ լից և սղկէ և ղեղգրով աչքն դիր» (էջ 17 ա):

«Աչք, որ շաղ ունի, բոշու կամ հորդու լեղին ձագուց մեղրով ի վերա դիր»: «Աչք, որ կոպն թանձրանա և կարմրի, փոքր մանկան մէզն ի հում մեղրն խառնէ և դիր»:

Եթե աչքի կոպն արնակալած է, առաջարկում է՝ «անուշադրն (նաշագիր) մեղրով հալէ և պարզէ՝ վաղէն և երիկունն աչքն դիր» (էջ 18 ա):

Եթե աչքի կոպերի մազերը՝ թարթիչները թափվում են, ապա աչդառնող մազ ծկեցնելու համար առաջարկում է՝ «աչծի կատոր և մկան ծիրան աղա և մաղէ, մեղրով շաղախէ և ած ի կոպն, մազ բուսանի» (էջ 19 ա)։

Աչքի վրա բռնված սպիտակ փառն անցկացնելու համար հանձնարարում է՝ «առ խամ մեղրը և իռիզանի ծաղիկ և լից ի հասա եղեգ մի զմեղրն և զծաղիկն և զեղեգին բերանն և զբուրն շաղկէ հացով. և թաղէ ի մազ մազ, որ կփի, եղմն, և հան ի Ազաած և պահէ, երբ որ պիտենա, ի բան տուր, խիստ լավ է» (էջ 19 բ)։

Աչքի լույսը պակասելու դեպքում առաջարկում է՝ «առ մին գրգալ մեղր հում իս (բառասուն) հատ սղպիզ և և (հինգ) հատ զղտոր անծակ, պատառ մի դմակ, խառնէ և գինով կփէ, որ և (հինգ) մին մնա. և աչքն դիր լանա սատուծով»։ Եվ կամ՝ «առ յընձո լեղին, հում մեղրն խառնէ և զեղգրով աչքն քաշէ, զլոյսն յորդարէ։ Եւ գրած է թէ այս լեղիս և աղանա լեղին քաղցր համ է» (էջ 94 բ—95 ա)։

Այնուհետև, «Վասն ականջացաւի» գլխում տալիս է հետևյալ խորհուրդները։ Ականջացավի և ականջում խոց ունենալու ժամանակ՝ «առ սոցանոց և ծէծէ, ծծկեր տղայի գողով կփէ և ի ներս կաթնեցո, պատրուչք արա, ի մեղրն թափախէ և ի տապրն և յականջն դիր» (էջ 96 ա)։

Եթե ականջն ցալում է և թարախ է գալիս, «առ անձարութ դ (չորս) դրամ, ասպր բ (երկու) դրամ, շիպ ա (մեկ) դրամ ու կէս, ժանգառ բ (երկու) դրամ, մեղր ժ (տաս) դրամ, քացախ ք (ութ) դրամ, ծեծելոյն ծէծէ և հալելոյն հալէ, յիրար խառնէ. լաւ մահլամ արա և ականջին դիր, սրբէ զթարախն և հանէ դհոտն»։ Իսկ եթե ականջից հոտ է գալիս և որդ կա ներսը, «զկաավառի ձեթն ի ներս կաթնեցո և լեղի մեղրով դիր» (էջ 22 բ—23 ա)։

«Վասն քթին որ արիւն երթա» գլխում հանձնարարում է՝ քթից ու բերանից արյան հոսքը գաղտնեցնելու և սրտի ցավի դեպքում՝ «առ ժ (տաս) ընկույզ և ափ մի կնդրուկ և խառնէ ի մեկ տեղ աղա և մեղրով կէր անօթեց դ (երեք) օր» (էջ 23 ա)։ «Վասն որ երեսն ուռած լինի» գլխում երեսի ուռածն իջեցնելու և երեսի գույնը զեղեցկացնելու համար առաջարկում է՝ «առ զլոշին տերեն, ծէծէ, զշուրն ի մեղրն և ի գինին խառնէ և խմէ»։ Մեկ այլ դեղատոմս՝ «մեղր և շաքար և կովու կարագ յիրար խառնէ և խմէ» (էջ 27 ա)։

Իսկ «որ սիրան և կուշան ցաւի, զանանուխն կփէ ջրով, և ի ձագույց մեղրն քամէ և խմէ գ (երեք) օր» (էջ 27 ա—27 բ)։

«Դեղ սրտին դարձուցանելու» գլխում սրտխառնոցի ժամանակ և սիրտն թափելու դեմ՝ խորհուրդ է տալիս՝ «առ ասորեակ և բողկի սերմն զգ (երեք-երեք) դրամ, լոսէ և մեղրով տուր անօթեց, զբլղամն ի վեր բերէ։ Այլ զեղ որ զսև մաղձն ի վեր բերէ, առ հալիլա և զխիարի ջուրն քամէ, նուշ կէս դրամ, մանանխս զանկ ու կէս, աղա և մաղէ և մեղրով խառնէ, և տուր որ խմէ» (էջ 27 բ)։ Եվ կամ այս նույն նպատակով այլ զեղ մաղձի՝ «քացախն և մեղրն յիրար խառնէ, սև բողկն կտորէ և ի ներս ձգէ թող որ կինա մինչև յառավոտն և յորժամ արևն բարձրանա առ և կեր առանց հացի և ի վերա տար ջուր խմէ թէ ինքն մատած որ գա» (էջ 97 բ—98 ա)։ Այս, ինչպես նաև հաջորդ՝ «Վասն բրլղամի» զեղատոմսը փաստորեն հանձնարարում է լյարդի բուժման, այսինքն՝ մաղձը մաքրելու համար, այսպես՝ «առ զբարդի ծառի կեղևն և զթրթի ծառի տակն միաշափ շորացո և մանր աղա, մեղր խառնէ և կեր, սրբէ զբրլղամն»։ Մեկ ուրիշ զեղատոմս՝ «հում մեղր և սպիտակ սոխ և սև բողկ յիրար խառնէ և կեր, զբրլղամն սրբէ և դիտսքն պարզէ», և կամ «Վասն»

մաղասի» խորհուրդը՝ «բողկն խորովէ և կեր, դստի ջուրն հան մեղրով և քիթն արկ»։ Այս զեղամիջոցները ըստ էութեան դողերոցքի բուժման համար են։ Իսկ հազիբ դեմ առաջարկում է՝ «աղ և մեղր խառնէ և տուր անօթեց» (էջ 29 ա)։

Փորահարիքը (երբ որովայնը ցավում է և արյուն է լուծում) հանձնարարում է բուժել հետևյալ կերպ՝ «առ խաս մեղր և սև ձուլթ, վալրի դաղձն և մարդո մաղ, կամ այծու և սխտորի ջուր, դձուլթն, զմեղրն և զդաղձն ի մեկ եփէ, որ աղտա լինի, և զմաղն այրէ, ի ներս ձգ և սխտորի ջրովն շաղախէ, աճո՛ւ աղեկ և պատրուզ արա և վերս փորից օժէ»։ Փորացավի դեմ՝ «զսէրկէ-վիլն խորւէ և մեղրով տուր ուտէ, զմիտքն բանա, և զփորն կապէ» կամ՝ «որ արին երթալ, առ զհինի կորիզն և աղանձէ, աղա և մաղէ ճերմակ՝ հում մեղր խառնէ և տուր ուտէ անօթեց երեք օր» (էջ 31 ա—31 բ)։

Ուշագրավ է, որ անհույս հիվանդի համար այնպիսի ղեղ է առաջարկում, որից կարող է պարզվել նա կապրի, թե ոչ։ այսպես՝ «Վասն լերդացափ զըլխում»՝ «լերդն, որ ի հովու թեղէ լինի ցան, պիտի որ զիտենաս եթե մահու է թէ ոչ, առ մեղր և քացախ չիրար խառնէ և ի վերս կշտին ւծ, թէ ցամաքի և շորանա, դու այն հիւանդին ղեղ արա զոր գիտես, ապա թէ դալալ մնա այն հիւանդն մահու է» (էջ 36 բ)։

Փայծաղի հիվանդությունը կարելի է բուժել հետևյալ կերպ՝ «զեղան կոտորն խարանա և մեղրով տուր որ ուտէ», կամ՝ «զգալլախոտն աղա և մեղրով տուր որ խմէ, օգալ աստուծով» (էջ 33 ա)։

«Վասն ցանկոթէնէ» զլխում առաջարկում է նույնիսկ սեռական թուլության ղեղատոմս՝ «առ զգիտյ ծառոյ, պտուղն, որ տանիկն արտու՛մ աղաճի առէ, ծէծէ և խառնէ ի մեղրն և տուր որ ուտէ, զսև քլզամն կտրէ և զմեղրն ամրացնե», կամ թե՛ «զգոմշու կաթն տաքացոյ և մեղրն խառնէ և անօթեց կեր ք (երեք) օր և թէ մարդո դուրսն շարժի՝ այլ այս ղեղս արա խիստ օգուտ է» (էջ 39 բ)։ Ինչպես նաև՝ «երբ առ կինն չիրթա թափի սերմն, առ սէրեխիչղ դարեսէնի որ է տարիչիմի, օշախ, սպանդ քիրա ե (հինգ)-ե (հինգ) դրամ, աղա և մաղէ, և խաս մեղրով մահ արա և տուր աւուրն զ (երեք) դրամ, մարզն զօրանա և կտրիչ դառնա» (էջ 39 բ—40 ա)։

Մարդու պորան ընկնելիս, երբ այն ցավում է, առաջարկում է՝ «զբողկին հունդն և զշարահոտն ծէծէ պարապուր և մեղրով տուր ուտե» (էջ 40 ա)։

Դյուրամիզության ղեպքում, այսինքն՝ «որ սպիտակ գոգե, մեղրն և քացախն չիրար խառնէ խմել տուր» (էջ 42 բ)։

Բացի վերը նշված խմիչղ ղեղերից, Ալեքսիանոսը առաջարկում է նաև վերքեր բուժող քսուկներ՝ մահլամներ։ «Վասն շոր հերք ունի» խորագրի տակ տալիս է ըոր ու ըորը բուժելու միջոցները՝ «առ սպիտակ մոմ, սև հառու ճրագու, շիրիկ ձէթ, չիրար խառնէ և քա՛ւ զվերքն, և չիրակ ի բաղանիս երթա, տաք ջրով ծփէ ու մանուշակի ձիթով։ Զհերքունն մոմ դարկ, մինչ արին մծի, աղա ղկայծակն մանր լուէ և ի վերս ցանէ, երեք օր ի նորն լուանին և երեք օրն ի փուլն» (էջ 60 ա—60 բ)։

Բորոտությունն բուժելու համար «Վասն պիտակի» վերնագրի տակ ասում է՝ «ամենայն պիտակի ղեղ զայս արա, առ ղկանդարիտոնն, որ է ոսկէ քզեղն, այն որ ոմանք եղն առնն, մանր աղա, քնդ մոմ և քնդ ձեթ խառնէ, քացախով լարս և ի վերս դիր զփոծորն հանէ, աչսինքն զմորթն հանէ, զզեղն ի վեր առ, տուր ար և ի վերս ցանէ, լաւանա աստուծով» (էջ 63 բ)։ «Այլ առ ղեղին և սպիտակ ծծումբն աղա ձիթով և մեղրով քացախով զիր» (էջ 64 բ)։

«Վասն խոցի» զլխում մարմնի խոցերն ու վերքերը բուժելու համար

Ալեքսիանոսը խորհուրդ է տալիս՝ «առ ճերմակ ձութ, որ է շամասիզի և խամ մոմ. և ուշաբրի երիկամանց ճրագուն, որ ի յանուն Մուրր աստվածածնին զենալ լինի ուշաբրն, Աստվածածնի ի տոնին մատաղ առնեն, և զհուրեանքդ ի մի տեղ հալէ և բեր հին կտաւ-քաթան և ձգէ ի հալած դեղա որ տար տարէ և թաթիւ լաթին, թող ափի շափ լինի և այնպէս դիր ի վերա խոցին, որ շայրի խոցն և փոխ առ փոխ դիր ի վերա»: Կամ՝ «առ զնուիճն շորացո և մանր աղա մեղրով շաղախէ և դիր ի վերա խոցին, մաքրէ և առողջ առնէ» (էջ 65 բ): Ընչպէս նաև՝ «մանանեխն հում մեղրով դիր», «կտավատն մեղրով դիր»: Այլ դեզ՝ «Զկալծուկ փշին տակն աղա և զվէրն մեղրով օծ և ի վերա ցանէ: Թէ խոցն չպատրի գաղափն ծիրան և զկտաւատն մեղրով ի վերա դիր» (էջ 66 ա):

Քարախային խոցեր բուժելու և ցավագրկելու համար առաջարկում է՝ «ոչոշան ծաղկին տակն շորացո և մանրէ, և մեղրով օծ: Եւ զորտեղ ի զեջ ցանն կերել է, զեղինչն շորացո և մանր լոսէ իբրն փոշի, զգանն մեղրով օծ, և ի վերա ցանէ լատանա աստուծով»:

Հանձնարարում է լավ մահչամներ տարատեսակ վերքերի բուժման համար՝ «անկլիբ, խալամի ժանգառ, մուրտասանք, մաղաւարէ, կունկ և. և (հինգ-հինգ) դրամ, այսոց պար ա պար մոմ: Զմոմն հալ է և բան զմոմն, բ (երկու) պողի ձեթ ի վերա լից և խառնէ եփէ և դիր ի վայր, որ քիչ մի պաղի, որ մաղ շայրէ, և ապա զղեղերն լից և խառնէ զխոցին, փութն կու հանէ և լատանէ»:

Առաջարկում է տար խոցեր հովացնող և կրակով այրված վերքեր բուժող մահչամ՝ «առ ոսպն ծէծէ և զկեղնն փշէ և եփէ, որ զերդ լանդակ դառնա և ապա առ սիլիկոն ժ (տաս) դրամ, անձարութի դ (չորս) դրամ, յիրար խառնէ, և զարկ և դիր ի վերա խոցին» (էջ 67 բ—68 ա):

Մեկային վերքեր բուժելու համար հանձնարարում է՝ «առ տորոն, մուր-տասանկ, և. և (հինգ-հինգ) դրամ, վարդի ձիթով եփէ, ա(մեկ) դրամ մոմ ի ներս ձգէ, թէ ի դուրս լինի, քամբակով ի վերա դիր և թէ ի ներսէ, պատրու-գով դիր»:

Վերքեր բուժելու համար ունի նաև քսուկներ, որոնց կոչում է «բաղդա-դու մահչամներ», այսպէս՝ «առ սպիտակ մոմ, և սև այծու երիկամաց ճրագու, զճրագուն և զմոմն հալէ և բարակ ուրսոլի սապան, հաւի ծվա (ձու) ի ներս մանրէ եփէ և վեր առ պատուկան մահչամ» (էջ 68 ա—68 բ):

Այրվածքների բուժման համար առաջարկում է մահչամ՝ «առ զնոան կեղնն եփէ և ջուրն ի զինին լից, և քիչ մի կտաւատի ձէթ լից ի վերա նոան կեղնին և ձեռքդ հար որ հալի, և բեր երկու ձգի զեղնուց եփած ի ներս ձգէ, և քիչ մի խամ մոմ հալէ, ի վերա ած, զամէնն դիր ի հաւանգն և ծէծէ և դիր ի վերա զդ (երեք-չորս) հատ, լատանա Աստուծով»: Մրսածի համար առաջարկում է՝ «մեղրով օծ և զխտորն մանր աղա և ի վերա ցանէ» (էջ 69 ա—69 բ):

Որոշ դեղ ու ճար էլ հանձնարարում է կանանց հիվանդությունների բուժման համար: Այսպէս, աղոցկան կնոջ փորը ցավելիս, խորհուրդ է տրվում՝ «զլոշխտակն եփէ, զջուրն մեղրով խմել տուր արբէ ցավն» (էջ 78 ա):

Նրբ տղոցկան կնոջ կաթն ցամաքում է, «Կին, որ կաթն ցամաքի» զըլ-խում կաթը հորդելու համար առաջարկում է՝ «զսամիթն եփէ և զջուրն խմէ, զաշորայն, զսիսեան, և զբակայն մեղրով եփէ և խմէ, և յորդէ զկաթն»: Մեկ այլ դեղ կաթի ավելացման համար՝ «հին գինի և հում մեղր և գարընցան ալիւր կուացո և տուր, որ ուտէ, օղնէ» (էջ 78 բ):

Քերանի խոտոլի զանազան հիվանդությունների՝ լեզվի, լնդերի, ատամ-

ների ցավի, ինչպես նաև առամների շարժվելու դեպքում, խորհուրդ է տալիս՝ «եւ թէ լեղուն և լինդքն փոքր եալ լինի, և կամ առամունք ի վայր գա, առ զլոշիտակի տերև և եփէ ջրով, քամէ դջուրն և մեղր խառնէ, և է (յոթ) օր խմել տուր, տակն ծէծէ և սպեղանիք արա և ի դուրս դեհն դիր, ողջանա աստուծով» (էջ 96 բ—97 ա):

Շատ ուշագրավ է նաև այն, որ Ալեքսիանոս բժիշկն այն դեղատոմսերի մասին, որոնք վերցրել է ուրիշներից, բայց ինքը դեռևս չի փորձարկել, ուղղամտորեն գրում է՝ «որդիէակ իմ, ես այսոր հասն ու նահախն իմանալ չկարացի, թէ սղալ բան երևա, անմեղադիր լերուք, օրինակն այսպես էր գրած» (էջ 75):

Ալեքսիանոսն այս ամենից բացի, ուշագրավ խորհուրդներ է տալիս նաև հիվանդությունների դեմ կանխարգելիչ միջոցներ կիրառելու վերաբերյալ: Այսպես՝ «Վասն մարդուն ինչն առողջ կու պահէ» խորագրի տակ խոսում է այն մասին, թե մարդն ինչպես հետևի իրեն, որ շփվանդանա: Ահա մեկ օրինակ՝ «ամառային եղանակին ով որ ամենայն այդ անօթեց, զ(երեք) պատառ անհալ մեղր ուտէ, անահ լինի ամենայն ցառոց» (էջ 51 բ):

«Ահա որդեակ իմ, — ավարտում է իր խրատները նա, — այս է, որ մի բոս միռջէ գրեցի պարզ և յիստակ բանիւ: Եւ այն, որ մնաց, իմաստուն մարդու հարց և ուսիր, և զմեղաւոր Ալեքսիանոս յիշեա ի տէր»:

Մենք վերը նշված գրեթե բոլոր դեղատոմսերն ու գեղերը խստագույնս հետևողականությամբ օգտագործել ենք և բոլորն էլ ավել են զգալի արդյունք:

Այդ են վկայում նաև բազմաթիվ մասնագետներ: Հազիվ թե որևէ հիվանդության կամ վերքի ինչ-որ չափով շօգնի մեղվի արտադրանքը: Տասնյակ տարիների մեր սրբատոմսերն ու այդ արժեքների ժողովրդական բժշկության մեջ կիրառելու փորձերը ավել են լավ արդյունք, որոնք այսօր էլ համարձակ օգտագործում ենք որպես լավագույն դեղամիջոցներ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1 Մանենկաուս, ձեռ. № 8185:

Աստղած է 1. III. 1989.

Биолот. ж. Армении, № 5 (42) 1989

УДК 615.89

## ДИКОРАСТУЩИЕ ПИЩЕВЫЕ РАСТЕНИЯ АРМЕНИИ В НАРОДНОЙ МЕДИЦИНЕ

И. С. МЕЛКУМЯН

Институт ботаники АН АрмССР, Ереван

Показано применение более чем 40 видов растений дикорастущей флоры Араратской котловины в народной медицине. Некоторые из приведенных сведений заслуживают углубленного изучения, в особенности касающихся таких растений, которые применяются при лечении гипертонии, сахарного диабета, импотенции и др.

Ցույց է տրված Արարատյան զոգահովտի վայրի ֆլորայի ափսիս բան 40 տեսակ բույսերի կիրառությունը ժողովրդական բժշկության մեջ: Ներկայացված տեղեկությունների մի մասն արժանի է խոր ուսումնասիրության: Հատկապես այնպիսի հիվանդությունների դեմ, ինչպիսիք են՝ հիպերտոնիան, շաքարային դիաբետը, իմպոտենցիան և այլն: